Սարոյան Պրեմիերան Սարոյան Համալիրում

Նոր լիամետրաժ փաստագրական ֆիլմի դեբյուտը տեղի կունենա ապրիլի 13-ին և 14-ին գրող-դրամատուրգի հայրենի քաղաքում:

Փոլ Քալինյանի «Վիլյամ Սարոյան Մարդը, գրողը» ֆիլմի պրեմիերան տեղի կունենա Վիլյամ Սարոյանի անվան համալիրի թատրոնի դահլիճում, շաբաթ, ապրիլի 13-ին: Այն կլինի մի հիանալի միջոցառում Ֆրեզնոյի պատմության նվիրյալների համար:

Թատրոնի ճեմասրահը զարդարված կլինի «POP» Լավալի լուսանկարիչ-պատմաբանների մեծադիր որմնանկարներով, պատկերելով առաջին աշխարհամարտի ժամանակները, երբ «Վիլի» Սարոյան մանչուկը օրաթերթ էր վաճառում հին Ֆրեզնոյի «Republican»-ի խմբագրության շրջակայքում (այժմյան Ֆրեզնոյի Դաունթաուն ակումբի շենքը) և հետագա տարիների լուսանկարներ, որոնց մեջ պատկերված է այժմյան Ֆրեզնոյի ծնունդ և Փուլիցեր մրցանակի արժանացած գրողը հեռագրեր բաժանելիս, որը միաժամանակ փորձում է գրող դառնալ:

Հավաքույթի ընթացքում կներկայացվի նաև Սարոյանի ամենանշանակալի պիեսներից մեկը՝ «Է՛յ, ով կա այնտեղ»: Պիեսը կներկայացվի Fantasy թատերախմբի կողմից՝ Գրեգորի Թաբերի ղեկավարությամբ:

Ներքևի ճեմասրահը լինելու է «Հայրենիքի կարոտի ընդունարան»՝ հովանավորողների և հյուրերի համար: Ֆրեզնոյի քաղաքագլուխ Քարեն Հեմֆրին և դպրոցական տեսուչների վարչության նախագահ Դերան Քոլիգյանը միասին կհյուրընկալեն մեծահարգո հյուրերին, իսկ նախկին քաղաքագլուխ Դանիել Ք. Վայթհերսթը հանդես կգա որպես արարողապետ: Մեծահարգո հյուրերի շարքում կլինեն Սան Ֆրանսիսկոյի օպերայի աստղ Էդնա Կարապետյանը, որն իր շնորհքով կզարդարի տոնակատարությունը, Ֆրեզնոյի ծնունդ դերասան Մայք Քոնորսը և Լոս Անջելսի հանրահայտ դիզայներ և նկարագարդող Ռեն Վիքսը: Ֆիլմի տեքստը կարդում է Մայք Քոնորսը, իսկ Ռեն Վիքսը կհանդիպի «իր հեռակա գործընկերոջը»՝ Քալինյանին, որի հետ համատեղ աշխատանքով այս տարվա մայիսի 22-ին Ֆրեզնոյում և Երևանում կթողարկվի «Վիլյամ Սարոյան» նամականիշը:

Թե՝ ֆիլմի և թե՝ նամականիշի նախնական աշխատանքները ընկըսվել են 15 տարի առաջ, երբ Ֆրեզնոյաբնակ լուսանկարիչ Քալինյանը կարողացավ համոզել կովարար Սարոյանին, որ թույլ տա իրեն նկարել: Սարոյանին նկարել գրեթե չէր հաջողվում: Նկատելով Քալինյանի լուսանկարչական ապարատը, առաջին բառերը, որ նա արտասանեց, եղան՝ «Կորի՛ այստեղից, ես չեմ ուզում լուսանկարվել»:

Բարեբախտաբար, ծնունդով լիբանանահայ Քալինյանը ավելի համառ գտնվեց, և այն գունավոր բնորոշ դիմանկարները, որ նա 1976 թ. օգոստոսի 26-ին լուսանկարել է Ֆրեզնոյաբնակ նկարիչ Վարազ Սամվելյանի արվեստանոցում՝ արկղերի և զամբյուղների հարևանությամբ, հայտնի են բոլորին և հրատարակվել են ամբողջ աշխարհով մեկ: Երբ Միացյալ Նահանգների փոստային վարչությունը որոշեց բաց թողնել Սարոյանի դիմանկարով նամականիշ, որպես նրա գրական-ստեղծագործական շարքի մի մաս (մի անհրաժեշտ պայման, որ կատարվում է արվեստագետների մահից առնվազն 10 տարի հետո), նախագծային բաժինը դիմեց Քալինյանին օգտագործելու Սարոյանի դիմագծերից մեկը: Ռեն Վիքսին, որ ձևավորել է Միացյալ Նահանգների 6 նամականիշներ, հանձնարարվեց Սարոյան նամականիշի ձևավորումը:

Սարոյանը մահացավ քաղցկեղից 1981 թ. մայիսի 18-ին: Այս թվականից ի վեր Քալինյանը շարունակեց մեծ գրողի կյանքի հետազոտության գործը Ֆրեզնոյում, այն ուղին, որ նրան տանում էր դեպի հաջողություն և համաշխարհային ճանաչում որպես բազմաժանր գրող: Ժամանակի ընթացքում, երբ Քալինյանը ավելի շատ բան իմացավ Սարոյանի կյանքի մասին, նա ընտեղծեց լուսա-տեսագրական ֆիլմ Սարոյանի երիտասարդական տարիների մասին: «Հասակ առնելով Ֆրեզնոյում» ֆիլմը հետագայում միացնելով «Լուսանկարիչը, որ լուսանկարեց Սարոյանին» ֆիլմին, լուսանկարչին հաջողվեց ներկայացնել գրողին բնորոշ հատկանիշները: Ֆիլմը դիտվել և գնահատվել է հանդիսատեսի կողմից ամբողջ երկրով մեկ:

«Վիլյամ Սարոյան Մարդը, գրողը» ֆիլմը մի առանձնահատուկ և համարձակ ծրագիր է: Սյուժեն գրվել, բեմադրվել և արտադրվել է Քալինյանի կողմից: Վերջնական արտադրությունը՝ մի ժամից ավել տևող լիամետրաժ կինոնկար է, որն ընդգրկում է կադրեր Սարոյանի հիշողություններից իր անցյալի մասին և ամփոփում է գրողի 60 տարիների գրական-ստեղծագործական կյանքը: Ֆիլմում ընդգրկված են հազվագյուտ այլ կադրեր տեղական շարժանկարներից, տեսաժապավեններից, պատկերներ, որոնք գովաբանում են 20-րդ դարի առաջին տասնամյակների Ֆրեզնոյի պատմությունը, ինչպես որ նկարագրված են Սարոյանի ստեղծագործություններում և նրանց գրվածքներում, ովքեր պատմել են Սարոյանի մասին: Երաժշտական յուրօրինակ ձևավորումը օժտել է ֆիլմին վարակիչ տրամադրությամբ և կենսուրախությամբ:

Կինոնկարը ներկայացված է FECH հասարակական միավորման կողմից: Պրեմիերայից գոյացած հասույթը օգտագործվելու է տեսաժապավենների կրկնօրինակների բազմացման համար, որոնք ուղարկվելու են գրադարաններին, համալսարաններին, դպրոցներին և անհատներին, ովքեր կցանկանան ունենալ իրենց սեփական օգտագործման և հաճույքի համար: Ստացված գումարը կօգնի վերստանալու ֆիլմի արտադրության ծախսերը: Կինոնկարը կարող են ձեռք բերել նաև հետաքրքրվող այլ խմբեր հասարակական (ոչ շահույթաբեր) նպատակների համար:

Շաբաթ, ապրիլի 13-ին ֆիլմի պրեմիերայի, «Հայրենիքի կարոտ ընդունարանի», և կիրակի, ապրիլի 14-ի ցերեկային ներկայացումների համար փոստային նախնական պատվերները կարելի է կատարել գրավոր FECH-ի Միավորման միջոցով, 839 E. Elizabeth, Fresno, CA 93728:

Շաբաթ երեկոյան, ժամը 8:00-ի տոմսերի արժեքն է $17:50, 15·50, 9·50:

Կիրակի, 1:30-ի ներկայացման տոմսերի արժեքն է $15·50, 13·50, 7·50:

Հովանավորողների տոմսերը «Հայրենիքի կարոտ ընդունարանի» միջոցառման համար (շաբաթ երեկոյան ժամը 6:00-ին) տոմսերը արժեն 125 դոլար՝ ներառյալ թատրոնում վերապահված աթոռները: Մանրամասնությունների համար զանգահարել (209) 237-5072 կամ (209) 445-1346:

Տոմսերը կարելի է ձեռք բերել նաև Ֆրեզնոյի կենտրոնի տոմսարկղից, 700 "M" Street, Fresno, CA 93721 phone 498-4000.



Վիլյամ Սարոյան
Նկար՝ Փոլ Քալինյանի 1976